

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/4

24 մարտի 2015 թ.

Քննարկվեց «Կարեն Առուստամյան» ՍՊԸ-ի 12.03.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 279013 որոշման դեմ:

«Կարեն Առուստամյան» ՍՊԸ-ի գանգատում բերված փաստարկները.

Ըստ «Կարեն Առուստամյան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Գանգատաբեր) գանգատի, 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա հաշվետվությունը ուշացնելու համար 24.02.2015 թ-ի թիվ 279013 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության, որի հետ համաձայն չէ:

Գանգատաբերը նշում է, որ իր կողմից 19.12.2014 թ-ին կատարվել է էլեկտրոնային ստորագրության սպասարկման համար վճարում: 20.01.2015 թ-ին՝ հերթական հաշվետվությունն ուղարկելիս, պարզվել է, որ սպասարկող ֆիրմայի կողմից սպասարկման վճարը չկատարելու պատճառով կասեցվել է էլեկտրոնային ստորագրությունը: Գանգատաբերը նշում է, որ այն փաստացի սխալմունք է:

Նույն օրվա ընթացքում էլեկտրոնային ստորագրությունն ակտիվացնելու համար գանգատաբերի առցանց բոլոր փորձերը ձախողվել են՝ սպասարկող ֆիրմայի համակարգում խնդիրներ լինելու պատճառով: Վճարման փորձերը հաջողությամբ են ավարտվել միայն դրան հաջորդող օրը՝ 21.01.2015թ.:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է առաջադրված վարչական պատասխանատվությունը համարել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Կարեն Առուստամյան» ՍՊԸ կողմից 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար ընկերության տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.02.2015 թ-ի թիվ 279013 որոշմամբ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 15.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Քննարկվող դեպքում «Կարեն Առուստամյան» ՍՊԸ տնօրենի կողմից թույլ է տրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ

հողվածի 2-րդ պարբերության հատկանիշներով նախատեսված զանցանք: Մասնավորապես, 2014 թ-ի դեկտեմբեր ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը մինչև 2015 թ-ի հունվարի 20 ներկայացվելու փոխարեն, այն ներկայացվել է հունվարի 21-ին: Արդյունքում ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 279013 որոշմամբ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 24.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 279013 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ